Հաստատված է
Տեխնիկական առարկաների
Ամբիոնի 30.08.2019թ. նիստում (արձ. Թիվ 1)
Ամբիոնի պետ _____ Մ.Ոսկանյան
30.08.2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		*Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն*
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		*Իրավագիտության հեռակա ուսուցման*
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		*Իրավագիտություն*
ԱՄԲԻՈՆ		*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի տեխնիկական առարկաների* **E-mail: qolegtex@mail.ru**
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		*Մ.Ոսկանյան* **E-mail: mvoskanyanpolice@gmail.com**, *հեռ. 091 43 16 41*
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		*8-րդ,9-րդ կիսամյակ*
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		*բակալավր*

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**4 (չորս)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		*«Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 10ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 4 ժամ գործնական պարապմունք, 102 ժամ ինքնուրույն աշխատանք:* *Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:*
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		*Դասընթացը կառուցվում է «Մասնագիտական ներածության և գաղտնիության ռեժիմ» դասընթացների իմացության վրա:*
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		*«Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են հատուկ տեխնիկա հասկացությունը, դասակարգումը, տեղեկատվական անվտանգության խնդիրները, տեխնիկական միջոցների կիրառման մառտավարությունը օպերատիվ ծառայողական գործունեության*

		կոնկրետ խնդիրները լուծելու համար:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		*Դասընթացի նպատակն է սովորողին տալ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից օգտագործվող տեխնիկական միջոցների մասին և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ:* *Գիտենան առանձին տեխնիկական միջոցների և դրանց կոմպլեքսների հնարավորությունները, կառուցվածքը և կիրառման տակտիկական հիմունքները, տիրապետեն անհրաժեշտ հմտությունների և կարողանան ինքնուրույն օգտագործել հատուկ տեխնիկայի միջոցները պրակտիկայում հաշվի առնելով օպերատիվ ծառայողական գործունեության կոնկրետ խնդիրները:* *Դասընթացի խնդիրներն են՝* • *ներկայացնել հատուկ տեխնիկա հասկացությունը և խնդիրները,* • *տեղետվական անվտանգություն հասկացությունը և խնդիրները,* • *տեխնիկական միջոցների դասակարգումը դրանց կիրառման իրավական հիմքերը,* • *տեխնիկական միջոցների կիրառման մարտավարությունը և առանձնահատկությունները,*
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1. *սահմանել հատուկ տեխնիկա հասկացությունը և խնդիրները,* 2. *ներկայացնել հատուկ տեխնիկական միջոցների կիրառման տեսական, իրավական և կազմակերպչական հիմքերը* 3. *ներկայացնել տեղեկատվության անվտանգության ապահովման ուղղված հիմնախնդիրները,* 4. *ինքնուրույն օգտագործել հատուկ տեխնիկայի միջոցները պրակտիկայում, հաշվի առնելով օպերատիվ ծառայողական գործունեության կոնկրետ խնդիրները*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		*«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք. Ե, 2001թ* *«Ոստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենք. Ե, 2002թ* *«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք. Ե, 2007թ* *«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք. Ե, 2005թ* *«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք. Ե, 1996թ* *«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք. Ե, 2002թ*

		«ՀՀ ոստիկանության զորքերի մասին» օրենք. Ե, 1998թ *Ս.Բադալով «Հատուկ տեխնիկա և տեղեփվական անվտանգություն» դասագիրք. Ե. 2013թ* Специальная техника органов внутренних дел; Учебник под общ. Ред. Ю.А.Агафонова Краснодар; КрУ МВД России 2011г
Լրացուցիչ		Министерство внутренних дел Российской Федерации. Московский университет. Кафедра специальной техники. Фондовые лекции по специальной технике. Автор Булдыгеров А.В.,Москва 2008г Специальная техника и информационная безопасность. Учебник под редакцией В.И.Кирина. Академия управления МВД России. Москва 2000г

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ

Ստուգարք (ստուգված, չստուգված)

Գնահատա-կանը	Միավորը՝		
	100	20	10
	միավորանոց համակարգով		
Գերազանց	95-100 87-94 81-86	20 19 18	10 9 9
Լավ	75-80 71-74 67-70 61-66	17 16 15 14	8 8 7 7
Բավարար	58-60 55-57 51-54 46-50 43-45 40-42	13 12 11 10 9 8	6 6 5 5 4 4
Անբավարար	<40	<8	<3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դասընթացի ընթացքում սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են 20 բալանոց համակարգով:
Դասընթացի ավարտին սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Ստուգված» կամ «Չստուգված»:
Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝
ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.
բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.

		գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. *դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:*
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		*Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:*
Ներկայություն		*Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:*
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Ոստիկանությունում կիրարվող «Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգության» միջոցները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հատուկ տեխնիկական միջոցների դերն ու նշանակությունը ոստիկանության աշխատանքում *2.Ոստիկանության «Հատուկ տեխնիկա» հասկացությունը:* *3. Հատուկ տեխնիկական միջոցների դասակարգումը:* *4. Ընդհանուր օգտագործման տեխնիկական միջոցների դասակարգումը:* *5. Օպերատիվ տեխնիկական միջոցների դասակարգումը:* *6. Հատուկ տեխնիկական միջոցների կիրառման իրավական և կազմակերպչական հիմքերը:*	*Հարցեր 1-6- դասախոսություն, ներկայացվում է հատուկ տեխնիկական միջոցների դերն ու նշանակությունը ոստիկանության աշխատանքում:* *Հարցեր 2-6– ինքնուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը:*

Թեմա 2 **Ոստիկանությունում տեղեկատվական անվտանգության արդիական հիմնախնդիրները:** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը: *2. Կիբեռնետիկական տարածության առաջացումը և նրա վրա ազդող երեք հիմնական ձևերը «տեղեկատվական պատերազմ», «տեղեկատվական ահաբեկություն» և «տեղեկատվական(կիբեր) հանցագործություն»:* *3. Տեղեկատվական անվտանգությունը և նրա խնդիրները:* *4. Տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներ առաջացնող գործոնները:* *5.Մարդկային գործոնով պայմանավորված սպառնալիքների ձևերը:*	*Հարցեր 1-5 – դասախոսություն:* *Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:*

Թեմա 3 **Տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Տեղեկատվության արտահոսքի պատճառներն ու պայմանները: *2. Մարդկային գործոնով պայմանավորված տեղեկատվության արտահոսքի պատճառներն ու պայմանները:* *3. Տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիներ առաջացնող պատճառներն ու պայմանները:* *4. Տեղեկատվության փոխանցման միջոցները:* *5. Տեղեկատվության փոխանցման ուղիները (հետախուզման օբյեկտ, տեղեկատվական ազդանշան, տեղեկատվության տարածման միջավայր):* *6.Տեղեկատվության արտահոսքի ուղի և տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիները:* *7.Ակուստիկ (ձայնային) տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիների դասակարգումը:* *8.Կապի և հեռահաղորդակցության ուղիներով փոխանցվող տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիների դասակարգումը:* *9.Տվյալների կորզման համար օգտագործվող տեխնիկական միջոցները:*	*Հարցեր 1-8 - դասախոսություն* *Հարցեր 1-8 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են գործնական պարապմունքին:* *Հարց 9 - անցկացվում է գործնական պարապմունք տեխնիկական միջոցների կիրառմամբ:*

Թեմա 4 **Գաղտնի դիտարկման և փաստաթղթավորման տեխնիկական միջոցներ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Գաղտնի դիտարկման և փաստաթղթավորման տեխնիկական սարքավորումներ, համակարգեր և դրանց կիրառման մարտավարությունը: *2. Դիտման սարքի հասկացությունը, դրանց օգնությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներում լուծվող խնդիրները:* *3. Դիտարկում իրականացնելու նպատակը և իրավական հիմքերը:* *4. Դիտարկման սարքավորումների դասակարգումը:* *5. Քողարկված դիտարկման մարտավարությունը:* *6. Գաղտնի նկարահանման էությունը թաքստոցից:* *7. Թաքստոցից դուրս անլուր նկարահանումը:*	*Հարցեր 1-7 - դասախոսություն* *Հարցեր 1-7 – ինքնուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին:* *Հարցեր 5-7 - գործնական պարապմունք տեխնիկական միջոցների կիրառմամբ:*

Թեմա 5 **Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռքբերում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար,2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման տեխնիկական սարքավորումների, համակարգերի կիրառման իրավական հիմքերը: *2.Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Գաղտնի աուդիո ձայնագրում» (ԳԱՁ) օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների դասակարգումը:* *3.Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Գաղտնի աուդիո ձայնագրում» (ԳԱՁ) օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների կիրառման նպատակը և մարտավարությունը:* *4. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» (ՀԽՎ)օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների դասակարգումը:* *5.Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» (ՀԽՎ)օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների կիրառման նպատակը և մարտավարությունը:* *6. ԳԱՁ սարքավորումների մարտավարական առանձեահատկությունեները* *7. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության գրառման տեխեիկական միջոցներ:* *8. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման օպերատիվ տեխնիկական միջոցառման անցկացման պլանավորումը:*	*Հարցեր 1-8 - Դասախոսություն:* *Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը և պատրաստվում են սեմինար պարապմունքին:* *Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք:* *Հարցեր 6-8 - գործնական պարապմունք տեխնիկական միջոցների կիրառմամբ:*

ՀԱՐՑԱՇԱՐ

«Հատուկ տեխնիկա և տեղետվական անվտանգություն» դասընթացի ստուգարքի

1. Ոստիկանության «Հատուկ տեխնիկա» հասկացությունը, հատուկ տեխնիկական միջոցների դասակարգումը:
2. Ընդհանուր օգտագործման տեխնիկական միջոցների դասակարգումը:
3. Օպերատիվ տեխնիկական միջոցների դասակարգումը:
4. Հատուկ տեխնիկական միջոցների կիրառման իրավական և կազմակերպչական հիմքերը:
5. Կապի համակարգի խնդիրները:
6. Ոստիկանության համակարգում գծային կապի դասակարգումը և խնդիրները:
7. Բջջային կապի կազմակերպումը:
8. Ռադիոկապի կազմակերպումը և տեխնիկական միջոցները:
9. Ոստիկանության համակարգում գերկարճալիք հաճախականային հատվածում աշխատող ռադիոկայանների տեսակները:
10. Պահպանության օբյեկտների դասակարգումը:
11. Ահազանգման տեխնիկական միջոցների նշանակությունը և դրանց դասակարգումը:
12. Տվիչների տեսակները և դրանց դասակարգումը:
13. Ընդունող--հսկող սարքերը և դրանց դասակարգումը:
14. Մուտքի կենտրոնական կառավարման դիտակետեր, օբյեկտների կենտրոնացված պահպանության կազմակերպումը, կիրառվող տեխնիկական միջոցները:
15. Ոստիկանությունում օգտագործվող հատուկ միջոցների նշանակությունը և դասակարգումը:
16. Հատուկ միջոցների կիրառության իրավական հիմքերը:
17. Անհատական պաշտպանական միջոցառումների տեսակները և հիմնական բնութագիրը:
18. Մարդու վրա ներգործող հատուկ միջոցների դասակարգումը և հիմնական բնութագիրը:
19. Օպերացիայի իրականացումն ապահովող հատուկ միջոցների դասակարգումը:
20. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և «տեղեկատվական հասարակություն» «տեղեկատվական պատերազմ», «տեղեկատվական ահաբեկություն» և «տեղեկատվական(կիբեր) հանցագործություն» հասկացությունները:
21. Տեղեկատվական անվտանգությունը և նրա խնդիրները:
22. Տեղեկատվության արտահոսքի պատճառներն ու պայմանները:
23. Մարդկային գործոնով պայմանավորված տեղեկատվության արտահոսքի պատճառներն ու պայմանները:
24. Տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիներ առաջացնող պատճառներն ու պայմանները:
25. Տեղեկատվության արտահոսքի ուղի և տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիները:
26. Ակուստիկ (ձայնային) տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիների դասակարգումը:
27. Կապի և հեռահաղորդակցության ուղիներով փոխանցվող տեղեկատվության արտահոսքի տեխնիկական ուղիների դասակարգումը:
28. Տվյալների կորզման համար օգտագործվող տեխնիկական միջոցները:
29. Գաղտնի դիտարկման և փաստաթղթավորման տեխնիկական սարքավորումներ, համակարգեր և դրանց կիրառման մարտավարությունը:
30. Դիտարկում իրականացնելու նպատակը և իրավական հիմքերը:
31. Դիտարկման սարքավորումների դասակարգումը:
32. Քողարկված դիտարկման մարտավարությունը:
33. Ոստիկանությունում օգտագործվող հատուկ քիմիական նյութերի սահմանումը և դասակարգումը:
34. Հատուկ քիմիական նյութերի կիրառման իրավական հիմքերը:
35. Քիմիական թակարդների սահմանումը և դասակարգումը:
36. Գաղտնի մատնադրոշման նպատակը և մարտավարական մեթոդները:

37. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման տեխնիկական սարքավորումների, համակարգերի կիրառման իրավական հիմքերը:
38. Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Գաղտնի աուդիո ձայնագրում» (ԳԱՁ) օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների կիրառման նպատակը և մարտավարությունը:
39.Խոսակցության միջոցով փախանցվող տեղեկատվության ձեռք բերման «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» (ՀԽՎ)օպերատիվ տեխնիկական միջոցառումների անցկացման համար տեխնիկական սարքավորումների կիրառման նպատակը և մարտավարությունը:
40. Ոստիկանությունում որոնողական տեխնիկական միջոցների կիրառման նպատակը:
41. Որոնողական տեխնիկական միջոցների դասակարգումը և տեխնիկական ընդհանուր բնութագրերը:
42. Ուղղակի և անուղղակի ապաքողարկող հատկանիշները:
43. Որոնողական գործնթացի կազմակերպման ձևերը:
44. Խորհրդապահական (կոնֆիդենցիալ) տեղեկատվության արտահոսքի հասկացությունը և տեղեկատվության միջավայր ներթափանցման տեխնիկական ուղիները:
45. Ոստիկանությունում ծառայական տեղեկությունների պաշտպանության նորմատիվ կանոնակարգումը, իրավական, կազմակերպչական և տեխնիկական պաշտպանություն մեթոդները:
46. Ոստիկանության հաղորդակցության համակարգերի տեխնիկական անվտանգության ապահովման իրավական հիմքերը:
47. Ոստիկանության հաղորդակցության համակարգերի պաշտպանությանն ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցսաումները:
48. Ահաբեկչության կանխարգելում աշխատակիցների, հաճախորդների և ձեռքի ուղեբեռի ստուգման կայանների կազմակերպում:
49. Ահաբեկչության միջոցների առաքումը փոստային ուղիներով:
50. Փոստային առաքումների կասկածելի նշանները:
51. Հակաահաբեկչական տեխնիկական միջոցների տեսակները, դրանց դասակարգումը և տեխնիկական ընդհանուր բնութագրերը: